ԿԱՐՈ՞Ղ Է ԱՐԴՅՈՔ ԿԵՐԱԿՐՈՂ ՄԱՅՐԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԿՈԼԽԻՑԻՆ

Այո, սակայն պահպանելով որոշակի ժամային ռեժիմ: Կոլխիցինի կանոնավոր օգտագործումը դադարեցնելու որևից է պատճառ չկա, քանի որ կրծքի կաթի միջոցով անցնում է կոլխիցինի աննշան քանակ: Կոլխիցինը խորհուրդ է տրվում ընդունել մինչև երեկոյան կերակրելը, քանի որ այն հայտնվում է կրծքի կաթի մեջ ընդունելուց 2-3 ժամ անց, իսկ փոխակերպվում և վերանում է՝ 7-11 ժամ հետո: Կերակրող մայրերին խորհուրդ չի տրվում ընդունել կոլխիմաքսը կոլխիցինի փոխարեն:

ԻՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ՀԻՎԱՆԴԸ ՄՈՌԱՑԵԼ Է ԸՆԴՈՒՆԵԼ ԿՈԼԽԻՑԻՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԴԵՂԱՉԱՓԸ

Երբեմն հիվանդը կարող է մոռանալ, արդյոք նա ընդունել է դեղորայքը: Այս դեպքում կրկնակի ընդունելու կարիք չկա: Գերդոզավորման վտանգը բարձր է, իսկ կոլխիցինի առավելագույն օրական դեղաչափը կազմում է 2.5 - 3 մգ:

ԿԱՐԵԼԻ՞ Է ԱՐԴՅՈՔ ՓՈԽԵԼ ԲԺՇԿԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԿՈԼԽԻՑԻՆԻ ԴԵՂԱՉԱՓԸ

Կոլխիցինի դեղաչափը նշանակվում է բժշկի կողմից յուրաքանչյուր հիվանդին: Այն կարող է տատանվել ըստ հիվանդի ռեժիմի՝ ճանապարհորդություններ, քննություններ և այլն: բուժման համար նշանակվում է օպտիմալ դեղաչափ: Բժիշկը կարող է նվազեցնել այն, եթե բուժումից մի քանի ամիս անց նկատվել է վիճակի կայուն բարելավում:

ԱՐԴՅՈ՞Ք ԿՈԼԽԻՑԻՆԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԳԵՆԱԿԻՐՆԵՐԻՆ

Առողջ հետերոզիգոտ կրողներին կոլխիցինը ցուցված չէ: Այն նշանակվում է գենակիրների մոտ ՊՀ կլինիկական ախտանիշների առկայության պարագայում:

ԿԱ՞Ն ԱՐԴՅՈՔ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊՀ ՏԱՌԱՊՈՂՆԵՐԻ ՄՈՏ ԿՈԼԽԻՑԻՆՈՎ ԲՈՒԺՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Նկատելի փոփոխություններ չեն նկատվում: Նրանց անհանգստություն կարող է պայմանավորված լինել առաջին անգամ անսովոր գենետիկական հիվանդության ախտորոշման մասին լուրի հետ, բայց ոչ կոլխիցինի կողմնակի ազդեցությամբ:

ԱՐԴՅՈ՞Ք ԿՈԼԽԻՑԻՆԸ ՈՒՆԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՄՈՔՍԻ ՎՐԱ ԵՐԿԱՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Կոլխիցինի ճիշտ, անգամ երկարատև ընդունման պարագայում, ՊՀ հիվանդների մոտ որևց է բացասական ազդեցություն ստամոքսի լորձաթաղանթի վրա չի նկատվում: Ստամոքսի հետ կապված խնդիրները կարող են առաջանալ զուգահեռ այլ դեղորայք ընդունելու կամ ՊՀ ուղեկցող ստամոքսի այլ հիվամդությունների առկայության պարագայում:

ՏՈՔՍԻԿ Է ԱՐԴՅՈՔ ԿՈԼԽԻՑԻՆԸ

Այո, իհարկե: Ինչպես ցանկացած դեղամիջոց, կոլխիցին կարող է ունենալ տոքսիկ ազդեցություն 5-6 մգ և ավել օրական դեղաչափով օգտագործելու պայմաններում:

I S T C
M H T Ц
International Scientific Technological Center

Prospective in Autoinflammation: Genetic and clinical aspects of hereditary periodic fever syndromes

Scientific Workshop, 9-12 May 2015, Yerevan, Armenia

Organized by:

Center of Medical Genetics and Primary Health Care
Department of medical genetics of Yerevan State Medical University
Armenian Association of human genetics

f. Երևան, 0001, Աբովյան փող. 34/3
Հեռ.՝ (+374 10) 54 43 67,
Ֆաքս՝ (+ 374 10) 54 43 66

ԲԺՇԿԱԿԱՆ ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈԼԽԻՑԻՆԻ ԵՐԿԱՐԱՏԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ՏԵՆԴ, ԿԱՄ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ (ՊՀ) ԻՆՉ Է ԴԱ

ՊՀ - աուտոբորբոքային բնույթի ժառանգական հիվանդություն է, բնորոշվում է պարբերաբար առաջացող նոպաներով, որոնք ուղեկցվում են բարձր ջերմությամբ/տենդով, որովայնի և/կամ կրծքավանդակի ցավերով, մկանացավերով, հոդացավերով/հոդաբորբով և տևում են մեկից մի քանի օրվա: ՊՀ հիմնական բարդությունն է երիկամների ամիլոիդոզի առաջացումը, որի արդյունքում զարգանում է երիկամային անբավարություն:

ՊՀ ախտորոշումը միշտ չէ կատաւվում ժամանակին: Ախտորոշվելուց հետո բժշկի կողմից սահմանվում է երկարատև բուժում կոլխիցինով և հսկողություն:

ԻՆՉ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԿՈԼԽԻՑԻՆԸ

Կոլխիցին դեղամիջոցը ունի հակաբորբոքային ազդեցություն, օգնում է նվազեցնել ՊՀ նոպաների ինտենսիվությունը և հաճախականությունը: Կոլխիցինի կանոնավոր օգտագործումը կանխում է երիկամային ամիլոիդոզի զարգացումը:

ԿԱՐՈ՞Ղ Է ԱՐԴՅՈՔ ԿՈԼԽԻՑԻՆ ՉՈՒՆԵՆԱԼ ԹԵՐԱՊԵՎՏԻԿ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՄՈՏ

Անհրաժեշտ է նախևառաջ հասկանալ, թե ինչ է նշանակում «չունենալ ոչ մի ազդեցություն»:

Կոլխիցինի հանդեպ ռեզիստենտ են հիվանդների մոտ 2%: Որոշ հիվանդների մոտ կոլխիցինի ոչ բավարար բուժական ազդեցությունը պայմանավորված է դեղորայքը անկանոն օգտագործելով:

Երեխաների մոտ կոլխիցինի ընդունման սկզբնական շրջանում կարող է նկատվել ոչ բավարար արդյունավետություն, ինչը կախված է դեղաչափի հետ:

ԱՐԴՅՈ՞Ք ԿՈԼԽԻՑԻՆԸ ՈՒՆԻ ԿՈՂՄՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Այո, իհարկե, ինչպես ցանկացած դեղամիջոց: Առավել հաճախ նկատվում է լուծ: Նման դեպքերում խորհուրդ է տրվում նվազեցնել կոլխիցինի դեղաչափը առաջիկա 2-3 շաբաթների ընթացքում, և ապա բժիշկի հսկողության ներքո, որոշակի ժամանակահատվածում հասցնել անհրաժեշտ բուժիչ քանակի:

ԵՐԲ Է ՀԱԿԱՑՈՒՑՎԱԾ ԿՈԼԽԻՑԻՆԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Կոլխիցինը հակացուցված է actinomycetes արտադրող հակաբիոտիկների հետ միաժամանակ, որոնց ազդեցության ներքո կարող է դրսևորվել կոլխիցինի տոքսիկ ազդեցությունը:

Կոլխիցինը հակացուցված է նաև ստատինների (խոլեստերինի բարձ մակարդակի վրա ազդող դեղամիջոցներ), իմունոսուպրեսորների և հակամակարդիչների հետ: Նշված դեղորայքը ստացող հիվանդները պետք է տեղեկացնեն այդ մասին իրենց բժշկին:

ԿԼԻՆԵՆ ԱՐԴՅՈՔ ԿՈԼԽԻՑԻՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԴԵՂԱՏԵՍԱԿՆԵՐ

Կոլխիցինի հաբերը դժվարությամբ են բաժանվում և դառը համ ունեն, ուստի հատուկ մանկական դեղատեսակի ստեղծումը շատ կարևոր է: Երեխաներին կոլխիցինը տալուց առաջ այն պետք է բաժանել և լուծարել խնձորի կամ այլ մրգի խյուսի մեջ:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ, ՈՎՔԵՐ ՉԵՆ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼ ԿՈԼԽԻՑԻՆ

Դեռահասները հաճախ չեն ցանկանում կոլխիցին ընդունել, պնդելով, որ ուզում են լինել «ինչպես բոլորը»: Սա տարբեր քրոնիկական հիվանդություններով տառապողներին բնորոշ արձագանք է և բուժումից հրաժարվելու նման որոշումը հաճախ կապված է ախտորոշումը չընդունելու հետ: Ինչին կարող է սա հանգեցնել: Առաջին հերթին, նոպաների հաճախացմանը: Նման դեպքերում, կարևոր է խորհրդակցել բժշկի հետ:

ԿՈԼԽԻՑԻՆ, ՀՂԻՈՒԹՅՈՒՆ, ԸՆՏԱՆԻՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ: ԱՐԴՅՈ՞Ք ՆՐԱ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՆՎՏԱՆԳ Է

Այո, իհարկե: Կոլխիցինի այն դեղաչափը, որը սահմանած է ձեր բժշկի կողմից, բացասաբար չի ազդի կանանց և տղամարդկանց վերարտադրողական համակարգի վրա: Խորհուրդ չի տրվում դադարեցնել կոլխիցինի ընդունումը ընտանիքի պլանավորման և հղիության ընթացքում:

Բազմաթիվ ուսումնասիրությունները հաստատում են, որ ընտանիքի պլանավորման և հղիության ընթացքում կոլխիցինի ընդունումը ծնողների կողմից չի ավելացնում բնածին արատներով երեխաներ ծնվելու հավանականությունը և ցուցում չի հանդիսանում պտղաջրերի հետազոտության:

Կոլխիցինը նվազեցնում է նոպաների հաճախականությունը ՊՀ տառապող հղիների մոտ: Ավելին, դեղորայքի անկանոն օգտագործումը հղիության ընթացքում հանգեցնում է բորբոքման զարգացման բորբոքմանը և մեծացնում է վիժման վտանգը: